

**Պ. ՄԵՎԱԿԻ «ԱՄԱՆԵՋ» ՎԵՊԻ ԼԵԶՎԱՌՃԱԿԱՆ
ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ**

Բանալի բառեր և արտահայտություններ. բառի լեզվաոճական արժեք, բազմաբարդ նախադասություն, դարձվածքներ, առած-ասացվածքներ, ոճական միջոցներ, գեղարվեստական արձակ, հիմնաբառ, լեզվամտածողություն, դասական, ժողովրդական, բանահյուսություն:

Ключевые слова и выражения: лингвостилистическая ценность слова, многосложное предложение, фразеологизмы, пословицы-поговорки, стилистические средства, художественная проза, понимание языка, классический, популярный.

Key words and expressions: linguostylistic value of the word, multisyllabic sentence, phraseological units, proverbs-sayings, stylistic means, artistic prose, language awareness, classical, public, folklore.

2014 թ. ընթերցողի սեղանին դրվեց Պ. Սևակի՝ «Ամանեջ» վեպը: Սևակ բանաստեղծը հայ մարդու մի մասնիկն է, նրա հոգեկան հարստության անբաժանելի մասը: Հետևաբար գեղարվեստական արձակում Պ. Սևակի խոսքը և՛ սպասելի էր, և՛ անչափ հետաքրքիր: Հայ մշակույթի մեծերի (Իսահակյան, Թումանյան, Չալենց և այլք) արձակին քաջածանոթ լինելով՝ հայ ընթերցողը միշտ մտքում ունեցել է իրեն հետաքրքրող հարցը. «Արդյո՞ք Պ. Սևակը չի ցանկացել ասել իր տաղանդավոր խոսքը արձակում»: Սևակ Ղազարյանը վկայում է. «...ուսումնասիրելով Պ. Սևակի դիվանի անտիպ նյութերը, սևագրերը, զանազան գրառումներն ու նշումները՝ կասկած չի մնում նրա»¹ հարցազրույցներից մեկում տված «Երագում եմ գրել արձակ...» խոստովանության իսկության մեջ²:

Նա գրում է իր գյուղի կյանքի, առօրեական հոգսերի, կենցաղի, սովորույթների, իր գյուղի մարդկանց հոգեբանության, զգալու և մտածելու նրբերանգների մասին: «Ամանեջ» վեպի յուրաքանչյուր տողում զգացվում է Պ. Սևակի հարազատությունը այն ամենի նկատմամբ, ինչը նա

¹ Ա. Ղազարյան, Պարույր Սևակի անտիպ ժառանգությունը, գեղարվեստական արձակ և գրականագիտություն, Եր., 2014, էջ 20:

² Տե՛ս Պ. Սևակ, Ամանեջ, Եր., 2014, էջ 3:

ներկայացնում է: Ասելիքը անսպառ է, և դա զգացվում է վեպի յուրաքանչյուր հատվածում: Այս մասին են վկայում վեպում տիրապետող հաճախելիություն ունեցող բազմաբարդ նախադասությունները և փակագծերում տրվող նախադասություններն ու բառակապակցությունները, որոնց միջոցով հեղինակը ամբողջացնում է շարադրանքը: Դրանք ունեն **հավելող, մեկնաբանող** նշանակություններ: Օր.՝ Ճիշտ է, նրա այս խոսքերը հնչում են իբրև սպառնալիք (Ամանեջում դրանք այլ կերպ չեն հնչում), բայց իբրև մի սպառնալիք, որ հետաձգվում է անորոշ ժամանակով (Ամ., 13):

Վաչեն եղբայրներին միասին տեսնելով (մի բան, որ շատ հազվադեպ էր պատահում), հասկացավ, որ գործը լուրջ է (Ամ., 45):

Նկատելի է նաև, որ հեղինակը երբեք անմասն չի ներկայացվող իրողությունների նկատմամբ. նրա վերաբերմունքը մշտապես ուղեկցում է պատումին. ի դեպ այն կարող է լինել և՛ փակագծում և՛ փակագծից դուրս, օր.՝ ...մեկը հարսի հոր կռանի կենացը (հարսնահայրը, ասում են, դարբին է եղել, և **սա կարևոր է**), մյուսն էլ՝ փեսայի մահակի կենացը (փեսան էլ հովիվ է - **նույնպես նշելու արժանի հանգամանք**) (Ամ., 17):

Հեղինակի վերաբերմունքը ներշաղխված է հերոսների մտածողությունը, հոգեբանությունը և ըստ այդմ՝ տվյալ իրողության արժևորումը ներկայացնող պատումի ներքին բովանդակությամբ:

Ուրիշներ ասածն էլ, **Ճիշտը որ կուզեք**, օտարներ չէին, այլ Երանոսի հարազատ (**թո՛ղ որ մորից խորթ**) եղբայրները (Ամ., 41):

Պ. Սևակի համար յուրաքանչյուր **բառ** վիպական արվեստի **հիմնաքառ** է, հենակետային այն անփոխարինելի միավորը, որի վրա հեղինակը կառուցում է տվյալ միտքը, գեղարվեստական պատկերը, կերպարը (անկրկնելի ոչ միայն տվյալ միջավայրում, այլև ընդհանրապես՝ երբեք չմոռացվող), հոգեվիճակը են: Օր.՝ Քանի որ անօգուտ էր անել **սամեհաօգուտակարը** («մինչև հիմա քոնն էր, թող հիմա էլ իմը լինի»), հինգը լուռ համաձայնությամբ որոշեց կատարել նվազ օգտակարը («քանի որ իմը չի, թող քոնն էլ չլինի») (Ամ., 42):

Եվ հանկարծ, շարունակելով գդալը նախշել, չբարձրացնելով գլուխը, նա **խզգաջ** (Ամ., 69):

Հորեղբայրը որ ևս լինեի, «**հորախալերը** քեզ թաղի, հա՛», - կասեի, - «ընդունված է **հորախալորը** ջուր տալ և ոչ թե **հորախալորից** ջուր ուզել»: Բայց, բարեբախտաբար, հորեղբայրը Երանոսն էր, և Իսակին ոչ ոք չէր թաղում... (Ամ., 41):

Բառը առանձնակի արժեք է ստանում մակդիրներում, համեմատություններում, փոխաբերություններում: Օրինակ՝

Անտարբերությունն ու հանգստությունը, եթե հոտ ունենային, կունենային Հերիքի **հոտը** (Ամ., 90):

Հերիքը, մանավանդ իր **կարճ ու ծույլ խելքով**, ի՛նչ իմանար... (Ամ., 109) ... այդ պահերին վառվում էր չարության ինչ-որ կրակ, ինչ-որ **սև բոց**, որ լափլիզում էր դիմացինի դեմքը (Ամ., 53):

Միծաղում էր նա անձայն, ոչ այնքան դեմքով, ինչքան **ուսերով**, որ նկատելի ցնցվում էին (Ամ., 99):

Վեպի լեզվին առանձին հմայք են տալիս **մի անորոշ հող + գոյական** կառույցները, որոնք հիմնականում չափի իմաստ են արտահայտում: Դրանց մի մասը դարձել է կայուն կապակցություն, օր.՝ մի փոր հաց, մի մատ երեխա, մի տախտակը պակաս, մի բերան խոսք ևն.սրանք ձևավորվել են խոսակցական լեզվում: Հեղինակի գրչի տակ դրանք դառնում են ժողովրդական մտածողության դրսևորում մի կողմից և գեղարվեստական անկրկնելի պատկեր մյուս կողմից: Օրինակ՝ Լեռան գոգավոր զագաթին նա կարծես **մի կտոր** երկինք լինի՝ բանտարկված մանկահասակ ջրաբույսերի կանաչ ցանկապատի մեջ, **մի կտոր** կապույտ երկինք՝ անծայրածիր երկնքի տակ, նրա հովանու ներքո (Ամ., 16) – Շեկ սարի արտին ստիպում էր **մի կտոր** հաց տալ... (Ամ., 36):

... **Մի լուծ եղը** «գարնան բերանը գցեն» (Ամ., 108):

... Թող որ ամուսինը նրան ցանցառ էր կոչում իսկ ուրիշները համարում էին **մի տախտակը** պակաս (Ամ., 105): Ամբողջ գյուղը **մի աչք – մի ականջ** հետևում էր Սրբուհուն (Ամ., 102): **Մի բերան** չէր ասի, թե սոված է (Ամ., 17):

Պ. Սևակի լեզվամտածողությունը անկրկնելի է մնում գեղարվեստական արձակում, որի յուրաքանչյուր կերտվածք (կերպար, բնավորություն, սովորույթ, ավանդույթ, բնապատկեր ևն) արվեստի հրաշակերտ նմուշ է, որ բնորոշվում է մեկ բառով՝ Սևակյան: Սայաթ-Նովայի ստեղծագործության գնահատականը, որ տալիս է Սևակ գրականագետը, աներկյա վերաբերում է նաև իր իսկ ստեղծագործությանը. «**Լեզու** ասվածը, ոչ միայն **հասկացողություն** է, այլ **հասկացություն**: Սայաթ-Նովայի համար, ինչպես ամեն մի իսկական բանաստեղծի, **լեզու հասկացությունը** բնականաբար նախառաջ նույնանում է **արվեստ** հասկացողությանը: Եվ այս բանում նրա, ինչպես ամեն մի ճշմարիտ արվեստագետի ասածները չեն կարող չլինել **ինքնատիպ և սեփական**»³ (ընդգծ. մերն են – Ա. Յ.):

³ Պարույր Սևակ, Անտիպ ուսումնասիրություններ, Եր., 2016, էջ 341-342:

Դիտողական և ճանաչողական մեծ արժեք ունեն վեպում հաճախ հանդիպող Սևակ մարդու, մտածողի և մեծատաղանդ գրողի **կենսափիլիսոփայական ընդհանրացումները**, որոնք ընթերցողի համար դառնում են կենսական նշանակություն ունեցող բանալի ճիշտ ապրելու սեփական բանաձևերը սահմանելիս: Օրինակ՝ Աշխարհում ոչ մի բան այնպես հեշտ ու արագ չի հաղթանակում, ինչպես կեղծավորությունը (Ամ., 59):

Դժբախտությունը շատ ավելի է մերձեցնում, քան երջանկությունը, որովհետև երջանկությունը, իսկապես ասած, հենց ինքը մերձեցումն է, ոչ թե մերձեցնողը (Ամ., 63):

Պ. Սևակի համար լեզուն իբրև **«հասկացողություն»** հավասարվում է **«խոսքին** ընդհանրապես», և գրողի ստեղծագործության լեզուն և ոճը գնահատելիս պիտի որոնել նրա ստեղծագործության հիմնարմատը, «բունը», որի վրա կառուցվում է նրա ստեղծագործությունը⁴:

Ըստ այդմ՝ աներկրա պիտի ասել, որ «Ամանեջ» վեպի բունը տնկված է 20-րդ դարում, իսկ արմատները նույնքան հին են, որքան հայերենը: Դրա լավագույն վկայությունն է վեպի լեզվի գերհագեցածությունը առած-ասացվածքներով, դարձվածքներով և դարձվածային միավորներով: Հեղինակը քաջ գիտակցում է բանահյուսաստության ներագույն ուժը գեղարվեստական խոսքում երկու առումով: Բանահյուսության ժանրի գործառույթը գեղարվեստական խոսքում

ա) ապահովում է ստեղծագործության **ժողովրդայնությունը**,

բ) ըստ ամենայնի ներկայացնում է **ժողովրդի լեզվամտածողությունը**:

Ժողովրդական բանահյուսության ներառումը վիպական խոսքում Սևակը կատարում է մեծագույն արվեստով, խոսքաշեն գրչի մեծատաղանդ հմտությամբ: Վեպում առած-ասացվածքների, դարձվածքների, որոնք «գեղարվեստական երկի ժողովրդայնությունն ապահովող լեզվական անգերազանցելի միջոցներ են⁵, իմաստուն խոսքերի, որ հեղինակը երբեմն «պապեկան» է կոչում, առատությունը հիմնավորվում է հետևյալ հանգամանքներով.

ա) Մարդկային կյանքը հրաշալի ճանաչող, մարդկային հարաբերությունների արժևորումը իր հոգում և մտքում վաղուց սահմանած գրողը բանահյուսության ժանրի միավորների միջոցով տալիս է հասարակական կյանքի ամբողջական պատկերը, իր գյուղի մարդկանց հոգեկերտվածքը, կենցաղն ու սովորույթները: Ճիշտ է նկատում Սևակ

⁴ Տե՛ս Պարույր Սևակ, նշվ. աշխ., էջ 343:

⁵ Լ. Եզեկյան, Ոճագիտություն, Եր., 2003, էջ 184:

Ղազարյանը, որ Պ. Սևակի նպատակն է եղել հասարակական կյանքի ամբողջական վերարտադրությունը մի կողմից և վիպական միջավայրի, կոլորիտի ստեղծումը մյուս կողմից⁶:

բ) Ժողովրդական լեզվամտածողության ճշգրիտ արտացոլումը Սևակ արձակագրի գլխավոր խնդիրներից մեկն է: Խոսքի մշակույթը «գրավոր և բանավոր խոսքի նորմերի իմացություն և դրանց տեղին ու արտահայտիչ գործածությունն է», որ համապատասխանում է «խոսքի բովանդակությանը և նպատակներին»⁷:

Իսկ Պ. Սևակը խոսքի մշակույթի անմրցակից գիտակ է: Բանահյուսական լավագույն նմուշները հեղինակի խոսքին ներշնչողական են: Առած-ասացվածքների գործառույթը վեպում ունի խորքային բնույթ: Հեղինակային պատումը, հերոսների խոսքը, գյուղի կենցաղի ու սովորույթների նկարագրությունը ակադձուն է դրանցով: Նրանք ունեն ճանաչողական մեծ արժեք և չեն ծանրացնում ընդհանուր պատումը, քանի որ առած-ասացվածքները «կյանքի երևույթներն ու հարաբերությունները պատկերում են **չափազանց սեղմ բանաձև-ընդհանրացումներով**»⁸ (ընդգ. մերն է – Ա. Յ.), որոնք հակիրճ ձևի մեջ ներամփոփում են մեծ բովանդակություն:

գ) Պ. Սևակը նպատակ ունի նաև տալ հայերենի գունագեղությունն ու հյութեղությունը: Գույների ներկայակերպ բանավոր-խոսակցական լեզվի հիմքում է, որի նորմերին քաջատեղյակ էր մեծ գրողը, գիտնականն ու հայագետը:

դ) Նրա գլխավոր նպատակներից մեկն է եղել ժողովրդին «համով դուլով անել»-ը, որը հեղինակը կարևոր է համարում ժողովրդի հոգու զարկերը արտահայտող յուրաքանչյուր գրողի համար⁹:

Դարձվածքները այդ թվում նաև առած-ասացվածքները, իմաստուն խոսքերը, դարձվածային միավորները «հատկանշվում են վերաբերության լայն շրջանակով, լսողին ազատ հնարավորություն են տալիս խոսքի բովանդակության ընկալման հարցում ակտիվ լինել, իրողությունը յուրովի ըմբռնել»¹⁰:

⁶ Տե՛ս Ա. Ղազարյան, Պարույր Սևակի անտիպ ժառանգությունը, գեղարվեստական արձակ և գրականագիտություն, էջ 50-53:

⁷ Հայոց լեզու և խոսքի մշակույթ (Յու. Ավետիսյան, Արտ. Սարգսյան և այլք), Եր., 2016, էջ 30:

⁸ Ա. Ղանալանյան, Առածանի, Եր., 1950, X:

⁹ Տե՛ս Պարույր Սևակ, Անտիպ ուսումնասիրություններ, էջ 343:

¹⁰ Ա. Մելքոնյան, Ակնարկներ հայոց լեզվի ոճաբանության, Եր., 1984, էջ 193:

Հետևաբար նրանց տեղին և առատ գործածությունը դրանք ընթերցողինը դարձնելու, նրա մտածողությունը հարստացնելու նպատակ է հետապնդում: Մյուս կողմից՝ ընդհանուր լինելով՝ նրանք տեղայնացվում, կոնկրետացվում են վեպում, ինչը օգնում է ընթերցողին իրեն զգալու Ամանեջում:

Պատահական չէ, որ հեղինակը դրանք ներկայացնում է չակերտներում և գրական լեզվի նորմերին համարժեք և ոչ թե բարբառով, չնայած որ նրա կերպարների խոսքը լի է բարբառային բառերով: Սա պիտի բացատրել Պ. Սևակի՝ խոսքի մշակույթի արվեստի ինքնատիպ արժևորմամբ: Չակերտները ցույց են տալիս, որ խոսքը հեղինակային չէ: Դրանք ունեն ճանաչողական մեծ արժեք ընթերցողի համար, որը պիտի լավ հասկանաք դրանց իմաստը, հետևաբար հեղինակը դրանք ներկայացնում է գրական լեզվով:

Դարձվածները ներառված են յուրաքանչյուր կերպարի բնութագրի մեջ, օր.՝ Նա մի մարդ էր, որի մասին ասում են. «Թքի օձի վրա՝ օձը կսատկի» (Ամ., 85):

Հեղինակը վեպում ունի ոչ միայն առանձին կերպարներ, այլև ամբողջական կերպաներ, ինչպիսիք են Ամանեջում բնակվող «հին հայերը» և «նոր հայերը»: Նրանք տարբեր էին սովորույթներով, հոգեբանությամբ, մտածելակերպով: Այս ամենը հեղինակը արտահայտիչ է դարձնում այն բազմաթիվ առած-ասացվածքներով, որոնցով բնորոշում է նրանց, օր.

...ապա ճիշտ է, որ «նոր հայերը» կանանց հարցում հետևում են մի առածի, որ գուցե առաջինը հենց իրենք են հնարել. «Ով չծեծի իր կնկանը, նա վա՛յ կտա իր ծնկանը (Ամ., 87): Այնինչ «հին հայերը» այլ կարծիքի են. «Կնոջդ տեղ թասա՛կդ ծեծիր, դի՛ր գլխիդ» (Ամ., 87):

Առածը ոչ միայն ռճավորման որոշակի միջոց, այլև կենդանի գործոն է վեպում: Հեղինակի խոսքում կարդում ենք. «Հիմա ինքներդ մտածեք՝ ինչպես պիտի **յուլա գնային** այս երկու իրարամերժ առածները: Պարզ է – շուն ու կատվի պես: Հասկանալի է նաև, որ «հին հայր» աղջիկ ուներ նույնիսկ շան բերանը գցելու, բայց ոչ «նոր հային» տալու, որպեսզի նա ճիպոտահարի նրան այնպես, որ կինը դեռ Աստծուն հազար բերան էլ փառք տա... (Ամ., 87):

Առածը հաճախ տեղայնանում է, կոնկրետացվում տվյալ խոսքային միջավայրում կամ տվյալ հերոսի բնորոշումներում: Օրինակ՝

... Կարող էին նաև ասել.

«Ոչ կուտեմ, որ կուտացնեմ – թարեքը կդնեմ՝ կիռտեցնում»: Կարող էին ասել, բայց չէին ասում, որովհետև առածը նրանով է առած, որ մի քիչ չափազանցություն է, իսկ այս առածը Հունանենց համար զրկված էր իր այդ հատկությունից – Հունանենք հենց այդպես էր ապրում էին (Ամ., 83):

Ժողովրդական մտածողության վերարտադրման միջոցներից են բանավոր-խոսակցական, բարբառային, երբեմն էլ ռուսերեն բառերն ու բառակապակցությունները, որոնք որոշակիորեն ծավալ ունեն վեպում: Պատահական չէ բացատրական բառարանի առկայությունը վեպում, որը կարևորվել է վեպի հրատարակման ժամանակ: Օրինակ Հիմա Վռամը, հագած **դանավուզե** շապիկ ու **ատլասաարխալուդ**, արծաթե թուլ-թուլ կապած գոտին իջեցրած կլորիկ փորին, իրեն համար հանգիստ նստում էր **«դախլի»** առաջ... (Ամ., 37)

- «Մի **մահալ** – մի Համբարձում», - հպարտանում էին նրանք (Ամ., 92):

...**Hy առա**, ոնց որ ռուսը կասի, եկեք ծուռ նստենք՝ ճիշտ խոսենք (Ամ., 46-47):

Հերոսների խոսքը, վերարտադրվում է անմիջականորեն, ինչպես այն կա, օր.՝ –Լաչառ... լի ըբ... անզգամ... Չի էլ ամաչո ւմ, ես քո մոր թայն եմ, **բո յո թաղեմ** (անեծք), գետինը չես մտնո՞ւմ (Ամ., 173):

Գյուղացու մտածելակերպը, սովորույթները, բուժման ձևերը ակնառու ձևով ընթերցողին հայտնի են դառնում պատումի ժամանակ դրանց մանրամասն նկարագրմամբ: Օրինակ՝ Սուրբ Կարապետ եկեղեցու դերը մեծ է գյուղացիների համար, մանավանդ այս կամ այն հիվանդությունից բուժման նրա գորությունը: Դրանցից չբերության բուժման համար Ամանեջցի (և ոչ միայն) կինը «լինի դա մի Նոյեմզար կամ Հոռոմ» (Ամ., 21) Ժողովրդական հեքիմության տարբեր միջոցների է դիմում, որոնցից են ննջեցյալի գերեզմանի վրայով թռչելը, մինչև նրան այնտեղ կոչեն, քառասուն օր վրայից շոր չհանելը, նորածնի ընկերքից նրա մորից գաղտնի մի կտոր խորովել ուտելը ևն: Անշուշտ կա հեղինակի վերաբերմունքը. Զբուժվելու դեպքում «ինչո՞վ է մեղավոր Կարապետը, եթե չբերն իսկապես չբեր է» (Ամ., 23):

Պ. Սևակը Ամանեջ գյուղը և նրա մարդկանց ճանաչում է այնքան խորը, որ վեպը, լինելով գեղարվեստական արձակի հրաշալի ստեղծագործություն, միաժամանակ վավերականության աստիճանի ճշգրիտ է թվում ընթերցողին, որը անմիջականորեն իրեն զգում է Ամանեջ գյուղում ապրող մարդկանց մեջ, որոնց կյանքի յուրաքանչյուր դրվագ հեղինակը միտումնավոր մանրամասնում է, բացատրում, հիմնավորում՝ հասկանալի դարձնելու համար ամանեջցիների մտածելակերպը, հոգեկան աշխարհը, այն կենցաղն ու սովորույթները, որում նրանք ապրում են:

Պ. Սևակի չափածո խոսքը ի լուր աշխարհի վաղուց հաստատել է, որ «Բանաստեղծները մի ճյուղ են, որով մշտադալար է մնում կենաց ծառը՝ կյանքի ածխաթթուն վերածելով թթվածնի»¹¹:

Սրա լավագույն ապացույցն է նաև «Ամանեջ» վեպը, որը Պ. Սևակի ինքնատիպ խոսքն է գեղարվեստական արձակում:

Ըստ կարևորի՝ պիտի ավելացնենք նաև, որ Պ. Սևակի լեզուն (անկախ նրանից՝ այն գիտական խոսքում է, գեղարվեստական արձակում, թե չափածոյում) **Սևակյան** է՝ իր դասականությամբ, անկրկնելիությամբ, հայերենի լեզվառձական հնարավորությունների անգուգական և ինքնատիպ գործառնություն:

Ա.Յուզբաշյան

Պ. Սևակի «Ամանեջ» վեպի լեզվառձական առանձնահատկությունները

Ամփոփում

Աշխատանքը նվիրված է Պ.Սևակի «Ամանեջ» վեպի լեզվառձական առանձնահատկությունների քննությանը: Վեպը առանձնանում է լեզվական ինքնատիպ կառույցներով, ինչպիսիք են բազմաբարդ նախադասությունները, փակագծերում տրվող բառերը, բառակապակցություններն ու նախադասությունները: Վեպում մեծ տեղ են զբաղեցնում դարձվածքները, առած-ասացվածքները, իմաստուն խոսքերը և կենսափիլիսոփայական ընդհանրացումները: Կատարել ենք դրանց լեզվառձական քննություն և արժևորել դրանք իբրև Պ.Սևակի լեզվի ինքնատիպությունը, ժողովրդայնությունը, փիլիսոփայական խորքը արտահայտող միջոցներ:

А. Юзбашян

Лингвостилистические особенности романа П. Севака <<Аманедж>>

Резюме

Работа посвящена анализу лингвостилистических особенностей романа П. Севака <<Аманедж>>. Роман выделяется лингвистическими своеобразными структурами: многосложные предложения, слова,

¹¹Պ. Սևակ, Սայաթ-Նովա, Եր., 1969, էջ 343:

словосочетания и предложения в скобках. В романе имеются фразеологизмы, пословицы-поговорки, мудрые слова и философские обобщения. Мы сделали их лингвостилистический анализ и оценили их как средства отражающие оригинальность, народность, философскую глубину языка П. Севака.

A. Yuzbashyan

Linguostylistic features of P. Sevak's novel <<Amanedg>>

Summary

The work is devoted to the analysis of the linguistic nature of P. Sevak's novel <<Amanedg>>. The novel is distinguished by linguistic peculiar structures: polysyllabic sentences, words, phrases and sentences in parentheses. In the novel there are phraseological units, proverbs-sayings, wise words and philosophical generalizations. We made their linguistic analysis and evaluated them as a means of reflecting the originality, nationality, philosophical depth of P. Sevak's language.